ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» հունվարի 2017թ. N 91-Ա

«ՏԱՐՎԱ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ԿԱՌՈՒՅՑ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ «ՏԱՐՎԱ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ԿԱՌՈՒՅՑ-2017» ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N85 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1111-Ն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետի 22-րդ, 25-րդ ենթակետերը և 15-րդ կետի 4-րդ ենթակետը՝ «Տարվա նախագիծ և կառույց-2017» մրցույթ-ցուցահանդեսի անցկացման նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաստատել «Տարվա նախագիծ և կառույց» ամենամյա մրցույթ-ցուցահանդեսի կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ստեղծել «Տարվա նախագիծ և կառույց-2017» մրցույթ-ցուցահանդեսի մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով.

Արմեն Ղուլարյան	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի տեղակալ (Հանձնաժողովի նախագահ)
Տիգրան Բարսեղյան	Երևանի գլխավոր ճարտարապետ (համաձայնությամբ)
Անուշ Տեր-Մինասյան	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար
Անահիտ Հախումյան	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն պետ

Մկրտիչ Մինասյան	Հայաստանի ճարտարապետների միավորման նախագահ (համաձայնությամբ)
Գագիկ Գալստյան	Հայաստանի շինարարների միության նախագահ (համաձայնությամբ)
Հրաչիկ Պողոսյան	Ճարտարապետ (համաձայնությամբ)
Սաշուր Քալաշյան	Ճարտարապետ (համաձայնությամբ)
Կարեն Ռաշիդյանց	Ճարտարապետ (համաձայնությամբ)
Սիրեկան Օհանյան	Ճարտարապետ (համաձայնությամբ)
Լիլիթ Տոռոզյան	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ավագ գիտաշխատող (քարտուղար)

3. Հանձնաժողովին՝ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը ամփոփել մրցույթ-ցուցահանդեսի արդյունքները:

4. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի մամուլի քարտուղար Անահիտ Եսայանին՝ ապահովել սույն հրամանի հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի կատարումը:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2015 թվականի ապրիլի 16-ի «Տարվա նախագիծ և կառույց» ամենամյա մրցույթ-ցուցահանդեսի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու ու «Տարվա նախագիծ և կառույց-2015» մրցույթ-ցուցահանդեսի անցկացման մասին» N85 հրամանը:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Նախագահ՝ **Ն. ՍԱՐԳՍՅԱՆ**

«22» հոկտեմբերի 2017թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական
կոմիտեի նախագահի
2017 թվականի 06-ի 22-ի
N 91-Ա հրամանի

ԿԱՐԳ

«ՏԱՐՎԱ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ԿԱՌՈՒՅՑ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է «Տարվա նախագիծ և կառույց» ամենամյա մրցույթ-ցուցահանդեսի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման և անցկացման կարգը:

2. Մրցույթի անցկացման նպատակն է՝ Մրցույթին նախորդող տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված լավագույն կառույցների կամ նախագծային առաջարկների (այսուհետ՝ Աշխատանք) բացահայտումը՝ բնագավառի զարգացումն ապահովող նորարարական մոտեցումների և գաղափարների ներառմամբ:

3. Մրցույթի կազմակերպիչն է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կազմակերպիչ): Կազմակերպչի հասցեն է՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 (e-mail: info@minurban.am):

4. Կազմակերպիչը՝

1) զանգվածային լրատվական միջոցներով (այսուհետ՝ ԶԼՄ) հայտարարում է Մրցույթի անցկացման, մասնակցության հայտերի և մրցութային նյութերի ներկայացման ժամկետների մասին, լուսաբանում է միջոցառման ընթացքը և արդյունքները,
2) ստեղծում է մրցութային հանձաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով),
3) ստեղծում է մրցույթի աշխատանքների կազմակերպման աշխատանքային խումբ (այսուհետ՝ Աշխատանքային խումբ)՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, e-mail: armarchmuseum@gmail.com),
4) սահմանում է մրցույթի անվանակարգերը:

5. Աշխատանքային խումբը՝

1) նախապատրաստում է Մրցույթի հանդիսավոր բացման, Հանձանժողովի աշխատանքների, մրցանակների հանձնման, մամլո ասուլիսների կազմակերպման աշխատանքները,
2) իրականացնում է մրցույթին ներկայացված նյութերի ընտրությունը,
3) ձևավորում է ցուցադրումը և հրատարակում մրցույթի կատալոգը (այսուհետ՝ Կատալոգ):

6. Մրցույթին ներկայացվում են հետևյալ անվանակարգերում իրականացված Աշխատանքներ՝

1) «Ճարտարապետական կառույց»
(բնակելի, հասարակական, արտադրական և բազմաֆունկցիոնալ նշանակության իրականացված շենքեր),
2) «Ճարտարապետական նախագիծ»
(բնակելի, հասարակական, արտադրական և բազմաֆունկցիոնալ նշանակության շենքերի նախագիծ),
3) «Լանդշաֆտային ճարտարապետություն»
(տարածքի ծավալատարածական կազմակերպման իրականացված նախագիծ),
4) «Ինտերիերի դիզայն»
(բնակելի, հասարակական, արտադրական և բազմաֆունկցիոնալ նշանակության շենքերի իրականացված ինտերիեր),
5) «Պատմամշակութային հուշարձանի վերականգնում և վերակառուցում»
(իրականացված նախագիծ),
6) «Լավագույն տպագիր հրատարակություն (ֆիլմ) ճարտարապետության բնագավառում»:

7. Մրցույթին կարող են մասնակցել անհատ ճարտարապետներ, հեղինակային խմբեր և նախագծային կազմակերպություններ (այսուհետ՝ Մասնակից):

8. Մրցույթին չեն կարող մասնակցել Հանձնաժողովի անդամները և նրանց ընտանիքի անդամները:

9. Աշխատանքները ներկայացվում են 80x120սմ չափերի ուղղահայաց վահանակների (ՊՎԽ) վրա՝ գաղափարն առավել ընկալելի դարձնելու և շահեկան մատուցելու ձևաչափով, գրաֆիկական տեսքով և էլեկտրոնային կրիչներով:

10. Ներկայացվող Աշխատանքի կազմում ներառվում են՝

1) բացատրագիր՝ կառույցի ճարտարապետական մտահղացման, ծավալահատակագծային, կոնստրուկտիվ լուծումների, ընտրված շինանյութերի վերաբերյալ տեղեկատվությամբ, A-4 ֆորմատի թերթի վրա (2 էջից ոչ ավել), Unicode կոդավորմամբ,
2) կառույցի գլխավոր հատակագիծը,
3) տարածքի բարեկարգման ուրվագիծը,
4) հարկերի հատակագծերը, հիմնական չափերը և տեխնիկատնտեսական ցուցանիշները,
5) ճակատները, բնորոշ կտրվածքները,
6) 3D եռաչափ պատկերը կամ հեռանկարը,
7) լուսանկարներ (սույն կարգի 6-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված անվանակարգերի համար),
8) լրացուցիչ նյութեր հեղինակի հայեցողությամբ՝ ինտերիեր, մանրակերտ և այլ ցուցադրանյութեր:

11. Յուրաքանչյուր վահանակի վերևի աջ անկյունում նշվում է Մասնակցի անձնական նույնացման ծածկագիրը՝ կազմված երկու հայերեն մեծատառից և հնգանիշ թվից: Նույն տեղեկատվությունը նշվում է նաև բացատրագրի առաջին թերթի և փակ ծրարի արտաքին մասի վրա: Ծրարի ներսում նշվում են հեղինակի (հեղինակների) անունն ու ազգանունը, կազմակերպության անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, այլ կոնտակտային տվյալներ, անհրաժեշտության դեպքում՝ մասնակցության մասնաբաժինների տոկոսներով և բանկային տվյալները (հաշվեհամարը):

12. Մասնակիցը՝

1) ներկայացնում է մասնակցության հայտ (համաձայն սույն կարգին կից Ձևի) նշելով անվանակարգը,
2) նշում է ներկայացվող նյութի ձևաչափը և այն էլեկտրոնային կրիչով տրամադրում Աշխատանքային խմբին՝ Կատալոգում ներառելու համար:

13. Մասնակիցը յուրաքանչյուր անվանակարգում կարող է ներկայացնել մեկ Աշխատանք:

14. Հանձնաժողովը սահմանված ժամկետում ուսումնասիրում և քննարկում է Մրցույթին ներկայացված Աշխատանքները, անհրաժեշտության դեպքում կազմակերպում տեղադիտում և ամփոփում արդյունքները:

15. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի անդամների առնվազն երեք քառորդի ներկայությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված ընթացակարգով: Քվեարկությունն անցկացվում է մեկ փուլով: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է: Հանձնաժողովի ընդունած որոշումները վերջնական են:

16. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված անվանակարգերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրավողներին տրվում են Մրցույթի 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմներ:

17. Մրցույթի Մասնակիցներին կարող են տրվել նաև դրամական պարգևներ՝ հաշվի առնելով ներկայացված Աշխատանքի կարևորությունն ու արդիականությունը: Դրամական պարգևների չափն ու քանակը որոշվում է Հանձնաժողովի կողմից:

18. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված անվանակարգերում 1-ին կարգի դիպլոմակիր մասնակիցներից Հանձնաժողովի որոշմամբ ընտրվում է Մրցույթի հաղթողը, որն ստանում է Մրցույթի գլխավոր մրցանակը՝ Գրան պրին:

19. Ճարտարապետական արվեստանոցին կամ հեղինակային խմբին պարգևատրելու դեպքում՝ սույն կարգի 16-րդ, 16.1-րդ և 17-րդ կետերով սահմանված պարգևները հանձնվում են ճարտարապետական արվեստանոցի կամ հեղինակային խմբի ղեկավարին:

20. Մրցույթին ներկայացված բոլոր աշխատանքները ներառվում են Կատալոգում:

21. Մրցույթի բոլոր մասնակիցներին հանձնվում են մասնակցության հավաստագրեր և Կատալոգի մեկական օրինակ:

22. Առանձին մրցանակներ և պատվոգրեր կարող են շնորհվել մրցույթի կազմակերպիչների, հովանավորների և այլ կազմակերպությունների կողմից:

23. Մրցույթի արդյունքների հրապարակումը և մրցանակների հանձնումը կատարվում են հանդիսավոր պայմաններում:

24. Մրցույթի միջոցառումների կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը կատարվում են «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, մրցույթի հովանավորներից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին:

25. Մրցույթին ներկայացված աշխատանքները, արդյունքներից անկախ, ի պահ են տրվում «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

Ձև

ՀԱՅՏ

«ՏԱՐՎԱ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ԿԱՌՈՒՅՑ – _____»
ՄՐՑՈՒՅԹ - ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

_____

անհատ մասնակից (անուն, ազգանուն) / կազմակերպություն (անվանում),

ի դեմս՝_____

պաշտոն, անուն, ազգանուն (կազմակերպությունների համար)

ցանկանում եմ մասնակցել «Տարվա նախագիծ և կառույց - ____» մրցույթ-ցուցահանդեսին հետևյալ անվանակարգում՝

☐ «Ճարտարապետական իրականացված կառույց»

☐ «Ճարտարապետական նախագիծ»

☐ «Լանդշաֆտային ճարտարապետություն»

☐ «Ինտերիերի դիզայն»

☐ «Պատմամշակութային հուշարձանի վերականգնում և վերակառուցում»

☐ «Լավագույն տպագիր հրատարակություն (ֆիլմ) ճարտարապետության բնագավառում»

Ներկայացնում եմ _____ վահանակ,

_____ մանրակերտ,

_____ տպագիր նյութ,

_____ ֆիլմ,

այլ _____ :

(նշել ներկայացվող նյութերի անվանումը)

Հասցե _____ ,

հեռ. _____ , ֆաքս _____,

e-mail _____ :

Հայտատու_____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

«ՏԱՐՎԱ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ԿԱՌՈՒՅՑ-2017» ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Մրցույթին մասնակցելու հայտ կարող են ներկայացնել

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում իրականացված քաղաքաշինական համալիրների, բնակելի, հասարակական, արտադրական և բազմաֆունկցիոնալ նշանակության կառույցների, ինտերյերների, ճարտարապետական փոքր ձևերի, բարեկարգման և այլ նախագծերի հեղինակները կամ հեղինակային խմբերը:

Մրցույթի հաղթողներն ընտրվելու են հետևյալ անվանակարգերում.

1. «Ճարտարապետական կառույց»
   (բնակելի, հասարակական, արտադրական և բազմաֆունկցիոնալ նշանակության իրականացված շենքեր),
2. «Ճարտարապետական նախագիծ»
   (բնակելի, հասարակական, արտադրական և բազմաֆունկցիոնալ նշանակության շենքերի նախագիծ),
3. «Լանդշաֆտային ճարտարապետություն/դիզայն»
   (տարածքի ծավալատարածական կազմակերպման իրականացված նախագիծ),
4. «Ինտերիերի դիզայն»
   (բնակելի, հասարակական, արտադրական և բազմաֆունկցիոնալ նշանակության օբյեկտի շենքերի իրականացված ինտերիեր),
5. «Պատմամշակութային հուշարձանի վերականգնում և վերակառուցում»
   (իրականացված նախագիծ),
6. «Լավագույն տպագիր հրատարակություն (ֆիլմ) ճարտարապետության բնագավառում»:

Մրցույթ-ցուցահանդեսի հաղթողներին տրվելու են.

Առաջին կարգի մեկ մրցանակ՝	600 000 ՀՀ դրամ,
Երկրորդ կարգի երկու մրցանակ, յուրաքանչյուրը՝	400 000 ՀՀ դրամ,
Երրորդ կարգի երեք մրցանակ, յուրաքանչյուրը՝	200 000 ՀՀ դրամ:

Մասնակիցներին հանձնվելու են նաև մասնակցության դիպլոմներ և մրցույթ-ցուցահանդեսի կատալոգներ:

Մրցանակների հանձնումը կկատարվի հանդիսավոր պայմաններում «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի» դահլիճում:

Մրցույթին ներկայացված աշխատանքները, արդյունքներից անկախ, ի պահ են թողնվելու թանգարանին:

Մրցույթին մասնակցելու հայտերի վերջնաժամկետն է՝ 2017 թվականի սեպտեմբերի 20-ը:

Աշխատանքների ներկայացման վերջնաժամկետն է՝ 2017 թվականի հոկտեմբերի 10-ը:

Աշխատանքները ներկայացնել «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» (ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, մուտքը՝ «Հանրապետության հրապարակ» մետրոյի կայանի կողմից, հեռ. +374 10 52-46-30, էլ. հասցե՝ armarchmuseum@gmail.com):